

ՄԱՍԻՍ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՃԵՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 38

15 ՍԵՊՏԵՄԲ. 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

Կանգաքողը

Եղիա Տէմիրճիպաւեան

Առտուան Աղօթիք

Օսուր Բարժեք

Փոքորկոս Գիշեր մը

Ռուս Հեղինակէ մը

Ալեքսանդր Տիւմա Որդի

[Գրական Ուսումնասիրութիւն]

Դէպի Արմաւ

Արձագանգ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԳՐԻԳՈՐ ԶՕՂՐԱՊ

ԶԱՊԷԼ ԱՍԱՏՈՒՐ

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

Ն. ԵԱԶԸՃԵԱՆ

X.

ՌՕՄԱՆ ԽՈՍՐՈՎ

ԽՄԲ.

Կ. ՊՈԼԻՍ

ՑՊԱԳՐ. ՃԻՀԱՆ

1907

UNION

OF THE

STATE OF NEW YORK

IN SENATE

JANUARY 1875

REPORT

OF THE

COMMISSIONERS

OF THE LAND OFFICE

IN RESPONSE TO A

RESOLUTION PASSED

BY THE SENATE

ON JANUARY 1874

AND

APPROVED BY THE

GOVERNOR

ON JANUARY 1875

ALBANY:

1875

PRINTED BY

THE STATE PRINTING OFFICE

ALBANY, N. Y.

ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԵԱՆ ԸՆԿ.

ՊԱՆԻՔԱՆ

Դրամագլուխ և պահեստ Ֆրանք 9,500,000

Վերադաճողագրական

դրամագլուխ և պահեստ » 142,740,000

ՊԱՆԻՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ շատ զիւրաժատելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ խառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Ղալաթիա, Տեօյէ Օրիէնդ Պանֆի կից, Սինասօն Խան.




Կը գտնուի բոլոր
գեղագործներուն քով:
Թուրքիոյ ներկայա-
ցուցիչ Ո. Սօլաքեանց.
Կ. Պոլիս:

ՀԱՅՈՒՇԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ԱՏԱԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանի նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խզճամիտ հոգածութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ., Թուրք. և Ֆրանս. լեզուները, ինչպէս նաեւ բնական, իմաստասիրական, չափական և ուրիշ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեւագիրութեան, կտրի և ձեւագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 օսմ. ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը և կէսը ծնունդի արձակուրդին: Դաշնակի և երգեհոնի համար կը պահանջուի 5, 3 եւ 2½ օսմ. ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 11ին (ն. Տ.), Դչ. իրեկունը: Աւելի տեղեկութեանց համար խնդրել Վարժարանին Յայտագիրը կամ Մ. Բիթի, Պայպըլ Հաուս, Կ. Պոլիս, կամ գրել Տօքթ. Ս. Էֆ. Գալաթեանի, Ատենայեւ իմամականութեան, Ատաբազար:

ԺԱՄԱՆՅ ԵՒ ՏԱՂԱՆԴ

Հետեւեալ նկարին վրայ զետեղել երեք հատ երկուքնոցներ , անանկ մը՝ որ դուրսը մնացած գիրերով կազմուի աւետարանական պատուէր մը : Երբ երեք երկուքնոցները իրենց յարմար տեղերը զետեղուին՝ աւելորդ գիրերը գրամներուն տակ մնալով և ջնջուելով՝ կը կազմուի այն պատուէրը՝ զոր պէտք է զտնել : Յաջորդը պարգև պիտի ստանայ իր լուսանկարին ակոսանէիսընանը : Պատասխանները կ'ընդունուին մինչև չորեքշաբթի իրիկուն , Մարտիի կողքին վրայ , ուր երկուքնոցներուն դրուելիք տեղերը գրամին հափովը պէտք է նշանակել մատիտով կամ մելանով :



ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ


ԴԻՏԱԿԱՆ ՍՄԵՆԱՎԵՐՋԻՆ ԴՐՈՒԹԵՍԱՄԻ կը դարմանէ ամէն տեսակ ախտայի և լինտի հիւանդութիւնները , փաստ ախտանքը կը լեցնէ՝ առողջ ախտանքու պէս երկար ատեն գործածուելու պայմանով :

ԲՈՂՈՐՈՎԻՆ ՆՈՐ ՄԵԹՈՏՈՒԼ , նուրբ , ճաշակաւոր և դիմացկուն արուեստական ախտանք կը պատրաստէ , լմակունին ճիշդ նման :

Հիւանդ կ'ընդունի ամէն օր իր դարմանատան մէջ , Բերա , Մեծ Բարմաք-Գարու , Թիւ 8 : Կարօտ հիւանդները ճրի կը դարմանէ հինգշաբթի օրերը՝ Բերաի Աղքատախնամ դարմանատունին մէջ :

Կիրակի օրերը ժամադրութեամբ կ'ընդունին :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՅԱԻ Մարդկային Մարմինը, Հեղինակութիւն Տօքթ. Յովսէփ Տ. Ստեփանեանի , զեղեցկապէս պատկերադարձուած բազմաթիւ նկարներով : Մարդկային կազմախօսութեան դասաւանդութեան համար լաւագոյն գիրքը , յանձնարարելի ամէն վարժարաններու : Մարդկային Մարմինը կը հետաքրքրէ նաեւ ոչ-գիտնական ընթերցողը , բացատրելով մարդուն կազմաբանութեան գաղտնիքները : Գինը 10 ղրշ. կը գանուի ամէն գրալաճառի քով :



ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55.ՐԴ. ՏԱՐԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 38

15 ՍԵՊՏԵՄԲ. 1907

ԿԱՐԳԱԹՈՂԸ

Մոլեռանդութիւնը ուրե՛ր է հասեր, և ելեր հաւտացնել կ'ուղեն մեզի թէ՛ լուսաւորութեան դարու մը ժառանգակից զաւակներ ենք :

Ծշմարիտ հալածանքի մըն են սկսեր Հայ վարժապետի մը ետեւէն, մէկ քաղաքէն միւսը, Հոգաբարձու Մարմինները դաւառային վարժարաններու, բանագրանքի և նշովքի նոր Ատեան մը կազմելով իրենք իրենց, դպրոցներուն սեմը կոխել չտալու համար այդ ուսուցիչը, որ մեզքը ունեցեր է, ատենով, քահանայութիւնը ձգելով ամուսնանալու :

Եւ հիմա, մինչ ուսանող սերունդին օգտակար ըլլալու ուխտովը հոգիին մէջ, կը ներկայանայ կրթական հաստատութիւններու, անոնց դուռերը կը փակուին իր առջեւ, իբր ամբարիշտ կնաջ մը՝ որուն երեսին կը գոցուին բոլոր ամօթխած սուրբերուն դուռերը :

Կ'ուզէ՞ք լսել իր սշտառուչ ու աղեխարշ նամակը . —

Մէկ կողմէն անգործութիւնս , միւս կողմէն հացի խնդիրը դրդած են զիս որ այս նամակս անձնականօր անպատեհ խնդիրներով խճողեմ : Որովհետեւ սոսկալի ցաւ զգացած եմ մինչեւ հիմա դպրոցի պաշտօն մը չգտնելուս համար և չափազանց խռոված : . . . Դրամը աչքիս չերեւար , բայց պաշտօնը և պաշտօնի գնահատումը , պաշտօնի գործնական յաջողութիւնը խիստ կարեւոր են . եթէ այս սարի ալ պարապ մնամ , որչափ պլտի զգածութիւն և խորապէս վիրաւորութիւն : Շատ լաւ կը հասկնաք անձնուէր ուսուցչութիւն ընողի մը անգործութեան մէջ ունենալիք հոգեբանական վիճակը :

Եւ այս ուսուցիչը՝ ամէնէն կարողներէն մէկն է՝ դաւառի մեր կրթական պաշտօնէութեան :

Խնդիրը ուսուցիչի մը անպաշտօն մնալը չէ՝ երբեք : Ատիկա մեր ուսուցիչներուն այն ցաւն է՝ որուն Բասթիօնը չէ ծնած տակաւին :

Գաւառացի ուսուցիչին գէտ յարուցուած հալածանքին մէջ ուշադրաւ խնդիրը այն ըմբռնումն է , բարբի այն տեսարանն է , կեղծաւոր մտնուանդութեան այն ցոյցն է , որով կեղծ պարկեշտութեան խաբերայ քուրմեր՝ իրենց հսկողութեան յանձնուած տաճարին դուռը կը փակեն երեսին ճշմարիտ հաւատացեալի մը՝ դատարարական տնչով յափշտակուած Հայ ուսուցիչին , անոր համար որ՝ ան ժամանակին կարգաթող է եղեր , շատ պարկեշտ ու անկեղծ պայմաններու տակ , երեցկնջը մահուան վրայ ու ամուսնացեր :

Չնաչխարհիկ չէ՞ բանադրանքը՝ որով կը նշուին խեղճ Հայ վարժապետը :

Եւ ասանկ չէ՞ որ կը դատուին մեղապարտները Պարկեշտութեան մեր արդի Ատեանին մէջ :

Մարդիկ՝ որոնց ծագումը և ծնունդը անյայտ կը մնայ , որոնք ազնուականի վետուրներով ու պերճաշուք զգեստաւորումով յլլիաջած կնոջ մը զարդարանքին տակ թերեւս կը պարտկեն ամէնէն անառակ կեանքի մը ամբարշտութիւնները , կեղքն Բարոյականի , Պարկեշտութեան և Անրծութեան առաքեալներ կտրել ուրիշներու գլխուն :

Թշուա՞ռ , հալածում՞՝ Հայ վարժապետ , օ՛ր մը իսկը ընէր դասաւանդութիւն մըն ալ պարկեշտութեան այդ կեղծ առաքեալներուն ընելու և հասկցնելու թէ՛ ո՛ւր կը սկսի ճշմարիտ Բարոյականը և ի՞նչ է դալիսին սուտ մաքրակրօնութեան :

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

Այն պահուն՝ երբ Եղիա ամէնէն աւելի կը խօսեցնէ իր վրայ , իր մահաշուք հիւանդութեան պատճառով և իր անձին շուրջը կեդրոնացուցած է կարեկից ցաւը և ուշադրութիւնը հասարակութեան , վերակենդանացնելու հաճոյքը կ'ուզենք ունենալ խորհրդապաշտ գրագէտին վրայ Զօհրապի հիւանդի մէկ էջը , ուր **Ծանօթ Վեպքերու** հանճարեղ նկարիչը՝ հուժկու վրձնիկով մը և բնատիպ վերլուծումի մը մէջ կը պատկերացնէ Եղիան , ամբողջական ճշգրիտ գիծերովը իր հոգեբանութեան , գրականութեան ու իմաստասիրութեան :

Ե Ղ Ի Ա Տ Է Մ Ի Ր Ճ Ի Պ Ա Շ Ե Ա Ն

Դիւանաբ ոգի մը . արծիւի մը երեւային նախաճաճ սարէ սար . երբեմն աւելի անդին՝ ուր պարապօրիւնը կը տիրէ ա'լ . կամ հաւա . սարակաւորիւնը կորսնցուցած օգապարիկի մը ոստոսառակ էլեւէջները , ընդհարե անելով ընթերցողները իր ետեւէն՝ խօյ , անբեւեռ ուղեւորութեան մը մէջ , ամենէն առաջ ինքը չափելով իր գրական զեղծումներուն միտքերու վրայ ձգելիք տարապայման խոնջեմը , զեղծումներ՝ որոնց տեղը չէ , զորս՝ անգիտակցաբար ի գործ կը դնէ եւ որոնց պատասխանատուութիւնը կը ծանրանայ սակայն իր վրայ ուղիղ բանի վերադարձի պահուն , շղային տագնապներու պէս , որոնք արբնութեան ասեմ հիւանդը կ'ամչցեն :

Այսպէս կը դասեն Եղիան նոյն իսկ անոնք որ իր համակրողներն են մեծ մասով : Ինքնասիւս տաղանդի մը զարթուողութիւնները կը վրդովեն զիրենք . այս տարօրինակ փայլը , դեղնորակ լոյս մը կայծակի զիկզակին պէս , աչքերը կը շլացնէ :

Կը պնդեն քէ *Ներեղիի* , *ընթեռնիի* համար որոշ , անանցանելի սահման մը կայ՝ ուրիշ դուրս ելլող ամէն բռիչ կը վիրաւորէ իրենց ընկալելի զաղափարներուն պարկեշտութիւնը :

Յետոյ կարծեմ քիչ մը իրաւունքով կը զայրանան Էսասէր , Էսամոյ գրականութեան մը դէմ որ Եղիայինն է : Յօժարաւիամ կը խոստովանիմ անոր բազմապատկառ արժանիքը , — հազուագիւտ արժանիք մը մեր օրերուն մէջ , — բայց անեղցնելու համար անմիջապէս որ՝ այս գրագէտին շատ մը դարձուածքները , նորակերտ բառերը , զաղափարներու արժանաւորութեանց ձեւերը՝ իրենց յանդգնութեան մէջ յաճախ այլանդակութեան կը յանգնեն :

* *

Ու քէ որ ճիշդ բլլար այս ամենը , պիտի պակսէ՞ր արդեօք գրագէտին արժանիքը . աշխարհաբարի այս Նարեկացին պիտի մոռցուէ՞ր , պիտի ուրացուէ՞ր մեզմէ :

Ամենու համար՝ Տեմիրիպաւեան իբր արձակագիր , մեկ հասիկ է

հիմակուան հայ դպրութեան մէջ . իր հասուածներու ձեւը՝ շատ անգամ երկարածից, բառերու ընտրութիւնը՝ շատ անգամ ծայրայեղ խնամով ու հոգածութեամբ ի յայտ եկած, գոյներու խայտառամուկ երանգները, իր եղական տաղանդին յատկանիւշները պիտի մնան :

Իր գրուածքներուն նոխարութիւնը՝ դեռաբուսիկ հառուսի մը աղմկալից նոխարութիւնը չէ, այլ վաղնջական ազնուակ սնի մը գեղեցկագիտական ոճը եւ տարազը :

Կարմիրը, կանաչը, դեղինը չեն տիրապետեր իր պատկերներուն մէջ . վրձինը՝ միշտ գովելի գգուելութեամբ մը՝ կը խուսափի այդ պոռապոյ գոյներու սասկուրեմէն . գրագէտին բոլոր նկարագիրը ներմակին ու սեւին մէջ կը տարութիւն, մէկէն միւսը կը օրջի շարունակ . այս նկարիչը՝ *հարօւն* մը ունի իր մասիսին քով եւ այսչափ միայն :

Եւ ի՞նչ պահեմ . այս կես-սուրբը կը պատշաճի իր գունաբաւի ձախիւն ու վալելչապէս կ'ընդգրկէ ամուր մօռայլամած սիրահարի դէմքը :

Սիրահարի՝

Տեմբրեհիպաշեան ալ գիրոյ արկածեալ մըն է արդեօք . ո՞վ գիտէ : Ոչ ոք կեանքի ունայնութիւնը, պատրանքին քողած դառնութիւնը իրեն չափ հզօր կերպով զգացած է, եւ կը սպասեմ որ վաղը ելլէ այն անկեղծութեամբ, որ իր գրական նշանաբանն է, խոստովանի իր յոռետես վարդապետութեանց՝ ռամիկ, սովորական եւ արդեն կես մը գուշակութեամբ սկզբնապատճառը :

* *

Բայց հոն՝ ուր յուսախաբը կը սպառնայ եւագատես մը դառնալ, հոն՝ պէտք է, պէտք է որ գրագէտը կանգ առնէ, բաժնուի անկէ . դժնդակ բայց անհրաժեշտ պարտաւորութիւն ամեն անոնց՝ որոնք հրապարակագիր են, խոստացած են, Զառուսին պէս, իրենց միտքը ու հոգին նուիրել, լափել տալ նիւաղի մը՝ որ հասարակութիւն կը կոչուի, նիւզ այն փոքրիկ նապաստակներուն նման, որոնք կը պահուին, կը սնուցուին, կը մեծցուին՝ գառագետի մը մէջ սպասող առիւծի մը հարակ դառնալու համար :

Այս չէ՞ արդեն գրագէտին յանձնառութիւնը :

Եւ այն ատեն, սիրտերնիս չի՞ պիտի սեղմուէր տեսնելով այն յոռետես վարդապետութեանց ներգործութիւնները, որոնք Եղիային հասցուցած երիտասարդ գրողներու վրայ առջի օրէն կը նշմարուին : Տղամէր, որ գերեզմաններու շուրջը կը դեգերին, փոխանակ կիներու շուրջը պստելու . որ չարագուտակ բուերու պէս կուլան, կը կոծեն, երբ պետք էին գուարբութեան ու ծպիտի կենդանութիւնը բերել մեզի . որոնք առջի փայլէն դասայիլ՝ կեանքի պայքարին մէջ, ո՛չ իրենց եւ ոչ մարդկութեան օգուտ ունին, եւ որոնք վերջապէս փաղափարութեան հաշիւներուն մէջ որ եւ է բուանչան կամ փանակութիւն չեն ներկայացներ :

Ո՛չ, չեմ ախորժիր այդ ոռնացող եղանակներէն . գերեզմանի, ոսկորի, գանկի, մարմինի շարքադրութեան վրայ կապուած գրագիտութիւն մը՝ որ իր ուրոյն արժանիքին չի կոթնիր, այլ սարսափով ու արհաւիրելով կը շանայ կանգուն մնալ, ուշադրութիւն հրաւիրել, եւ խղիղի, ուռուականի ձեւեր կ'առնէ, քերես մանուկները զգաստութեան բերելու համար :

Ո՛չ, չեմ սիրեր այս ամենը՝ մանաւանդ երբ եղիայէն զատ, անոր բարձր կարողութենէն, կամ անոր անձին յատուկ մեղմացուցիչ պարագաներէն զուրկ պատահիներ՝ ձեռնամուխ կ'ըլլան այս բացասական ու աղշամղջային գրականութեան :

**

Այն բարձունքներուն վրայ կամ այն անդունդներուն մէջ՝ ուր կը ներուի եղիային խոյանալ կամ գահալիծիլ, վնուկ մը կամ վարդապետ ըլլալ պէտք է եւ եղիան երկունքն ալ է միանգամայն :

Իր հմտութիւնը՝ վանականի ընդարձակ աղօթատեղիին պէս վե՛ն ու շեղ խոսութեամբ մը կահաւորուած է, ուրկէ մարդ երկիւղած կը մտնէ ներս, դուրսը քողով ամեն աշխարհիկ կապերը . ո՛չ հիմակուած գրողներէն շատերուն գիտութեանց պէս որոնք ցոյցի համար զարդարուած պշտաւոր տղոց սրահիկներ են, ուր խաղաղիկներէ զատ ոչինչ կայ, ցուցամով եւ հարեւանցի կահաւորում :

Այդ խոսակեաց միայնութեան ու վե՛նութեան մէջ ուր մեծ իմաստասերներու ոգիները կը շրջին, ուր Աստուածաշունչ մասեանը ու հնդիկ Ս. Գիւրգը կը վերձանուի, այս լուրիւնը, այս խորհելու, իր անձին վերադառնալու, անոր վրայ ամփոփուելու աշխատութիւնը կը վնասեն Տեմիրհիպոթեանին : Ներքինախեղութիւնը բաւ մըն է, զոր ինք ստեղծեց իրեն համար եւ որ պարզ մահկանացուներու աչիւն հաւորեցնէ շարքեր բաց մը չի նշանակէր բնաւ :

Եւ անհա խղճմանքի այդ խուլ վերձանումներուն մէջ է որ ամբոխը — ուսմիկը քէ որ կ'ուզէ՝ կը դադրի հետաքրքրուելէ ու իրեն հետեւելէ : Մարդ չի մնար շուրջը, բայց եթէ սակաւաթիւ բարեկամներու խումբ մը, որ դեռ հրապուրուած կնոջ մը պէս գրագէտէն չի բաժնուիր ուր որ ալ երթայ, աշխարհիս ծայրը եւ անկէ անդին, որ կը փնտռէ, կը հալածէ զինքը ամեն տեղ, փողոցին եւ դպրոցին մէջ, եւ որ պատահանէն գեր կը նետէ իր այցեւումը, երբ եղիային դուռը փակ կը գնէ իր առջեւ :

Բայց ետութեան վրայ կեդրոնացած իր իմաստասերի՝ խոյունները եթէ շահագրգիռ չեղեւան նւիրական ու դրական մեր ժամանակի մարդոց, զոնէ մեզմէ վերջը եկողները պիտի փնտռեն իր գործերը . իր վարանումները՝ որոնք ծաղրելի հակասութիւններ կը բուլին մեզի, պիտի արդարանան իբր նշմարիս իմաստունի մը խախտումները :

**

Ի՞նչ պիտի ըլլայ եղիային վախճանը :

Կը կարծեմ որ իր ալլակերայութեանց անակնկալներուն ծայրը հասած չենք դեռ :

Չի պիտի զարմանանք բնաւ եթէ օր մը, յիսուննոց աղջկան մը հետ

ելլէ ամուսնանայ, վերջին օրերու խնամով ընկերահի մը ունենալու համար իր ձեռքին տակ. կամ մտեղ, պարսաւս այրիի մը հետ որուն պիտի ցանկայ յանկարծ:

Իր հարսնիքին հրաւիրագիրը՝ այն սովորական գուեհիկ արձակը չի պիտի բլլայ զոր տպագրիչները եւ վիճակները զոց գիտեն, այլ ոտանաւոր ֆերբուսած մը, որուն մէջ մեզ ամենա հրաւիրելով մեկտեղ, մերօրուրիւն պիտի հայցէ մեզմէ այս վերջին յիմարութեան համար:

Կամ փողոցը պիտի պատահինք իրեն. մազերը՝ զոր ժամանակը փութացեր է արծաթել, երկայն, հողմածածա՛ն, ուտերուն վրայ. ոտները բոպիկ, ցեխին մէջ անփութօրէն կոխելով, սպիտակ գդակ մը գլուխը ու ձորձէ վերահու մը կռնակը, կուրծքը բաց, անպատասպարձիւնին, անձեռնին դեմ եւ ձեռքը երկաթէ գուլագանիկ մը, մուխը, որուն ծայրը օձերու գլուխներ իրարու կը փաթորին. քամերօրդ դարու հնդիկ փախիրը, որ անուշտ եղիւ Տեմիրնիպուսեանէն զաւս ոչ ոք կրնայ բլլալ:

ԳՐԻԳՈՐ ԶՕՂԲԱՊ

ԱՌՏՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

Կը ցրուի բանի մը շուշն աչքերէս,
վարդեր կը բացուին երկինքին երես,
փետուրներ ճերմակ թեւեր կարտալի
Կ'անցնին կը դառնան առանց բշտապի:

Հորիզոնին մէջ ուր ճամնանքներ տար
Կայծեր կը փառին ձիւն ամպին յատակ,
Ի՛նչ անուշ է լոյսն արեւուն գարնան:
Անոր ջերմ տեսքին մեզի կը դառնան

Բընուեան բոլոր գանձերն աղամանդ,
Ծաղիկ կը հագնին մարգերն ու մարմանդ,
Լեւակն ամառուն, մանուշակը մաւթ
Կը բանեն աղուոր աչուկնին կապոյտ:

Ու մեր պարտէզին ցանկերուն ետին
Ի՛նչ աղուոր ճիւղեր կը կախուին գետին.
Խորշոր ծառերուն սաղարթներուն մէջ
Ի՛նչ անուշ երգեր կ'ընեն ելեւէջ:

Այս շրջագծիւնն առաքւան կանուխ
Անհուն աղօթք մ'է մարութ, սրտաբուխ,
Ծաղիկն իր խունկով, իր երգով թռչուն,
Երկրպագելով գետը կարկաչուն

Քեզ կը նըւիրեն իրենց ալելուն,
Ո՛վ կեանքի աղբիւր, ո՛վ հայր ամէնուն.
Ու լեռներն, ձորէն, անտառէն, դաշտէն
Բոլոր էակներն ըզբէզ կը պաշտեն:

Թող որ ծունկի գամ ես-ալ, ո՛վ Աստուած,
Անճառ մեծութեանդ առջեւ ձեռնամաճ,
Եւ ուղղեմ քեզի ըզմանքներս անհուն
Լոյսի, աղօթքի այս վըսեմ պահուն:

ԶՍ.ՊԵՂԱՆ ԱՍՍՏՈՒՐ

ՓՈԹՈՐԿՈՏ ԳԻՃԵՐ ՄԸ

Բ.

Եւ այդ միջոցին , իրեն այնպէս կը թուի որ՝ աչքերը վարագուրող քողը պատուած է , և դաշտին խորէն փախիլուն ձիւնէ ամպի մը մէջ , Աստուծոյ տաճարը , արտասովոր կերտուածքով տաճար մը կը կանգնի՝ և ղէպի իր կողմը կ'առաջանայ : Այդ տաճարը կառուցուած է մարդկային հրայրքոտ սիրտերէ . չէնքը ամբողջովին սիրտի մը ձեւը ունի արդէն , և միջնաբեմին վրայ կը կանգնի Յիսուսը : Ծերուկը ասիկա տեսնելով կ'ելլէ տեղէն , կը ծնրադրէ այդ խորհրդաւոր տաճարին առջև , և կը դիտէ Փրկիչը , Մարտիրոսը : Եւ Յիսուս կը խօսի իրեն հետ , յստակ և քաղցրաբայր ձայնով մը .

— Գթութիւնով համակուած այս սիրտերը իմ տաճարիս հիմերն են : Մտի՛ր ուրեմն անկէ ներս , դուն որ այնքան գթութեան ծարաւին եղած ես , քու կեանքիդ ամբողջ տեւողութեանը միջոցին , դուն որ դժբախտ մը և խոնարհ մը եղած ես , մտի՛ր և հրճուէ՛ :

— Աստուած , ըսաւ կոյրը երջանկութենէն լալով : Դուն կ'ապրիս , Աստուած :

Եւ Յիսուս անպատում ժպիտով մը ժպտեցաւ ձերուկին և կնոջը՝ որոնք կենդանացած էին անմիջապէս աստուածային այդ յայտնութենէն : Եւ ասանկով էր որ երկու դժբախտ ձերուկներ սառեցան գիշեր մը , դաշտի մը մէջ :

Այդ պատմութիւնը վերյուշելէս վերջը ինքնիրենս կը խորհէի թէ բաւական պարզ և սրտազրա՛ւ էր ան : Կարո՞ղ էր արդահատանք արթնցնել ընթերցողներու սիրտին մէջ : Ինծի այնպէս կը թուէր որ կարող էր :

Այս մտածումին վրայ , ինքզինքէս դո՛ւ , կը սկսէի քննալ , հակառակ խոնջէնքիս , մտածելով հանդէսներուն և անոնց պատճառած նիւթական հոգերուն վրայ :

Փամացոյցս կը թիքթաքէր , հաշուելով անագորոյն ճշդութիւնով մը կեանքիս մասնիկները , որոնք կ'աներեւութանային , սառնոց իրենց ետեւը հետք մը ձգելու : Կը լսէի խուլ մրմունջը ձիւնին , որ կը տեղարանդադար : Փոթորիկը երթալով կը սաստկանար : Լապտերը մարեցաւ : Պատուհանին փեղկը ճռնչեց . ծառերուն ճիւղերը կը հարուածէին յամառօրէն տանիքին եղերքը : Հաւաքանքներ , հեծեմանքներ , կաղկանձիւններ , ողբեր , սուլումներ բարձրացան : Բոլորը մէկ կուգային լուծուիլ թախծաբան ներդաշնակութեան մը մէջ , որ կը պարուրէ մեղկութիւնով համակուած սիրտը : Բայց յանկարծ արտակարգ բան մը տեղի ունեցաւ : Պատուհանին աղօտ բիծը լուսաւորուեցաւ կապոյտ ու ֆոսֆորափայլ լոյսով մը , որ լայնցաւ և արագօրէն տարածուեցաւ

մինչև սենեակիս ներքնակողմը : Սենեակս ողողող այդ կապոյտ լոյսին մէջ երեւցաւ թանձր, ճերմակ, մշուշոտ ամպ մը, մարդկային աչքերու նմանող փայլուն կայծերով ծածկուած , որ տարօրինակ կերպով կը տատանէր , իբր թէ թաքուն ուժի մը ազդեցութեանը տակ գտնուած ըլլար : Ու ատիկա կը ցլար , կը հալէր և աւելի թափանցիկ կը դառնար հետզհետէ , կտորուանքներու կը բաժնուէր և վախէ ու ցուրտէ կը սառեցնէր զիս . և ինծի անհուն բան մը կը թուէր ան, գրեթէ սպառնացող : Եւ այդ ամպին մէջէն ձայն մը կը բարձրանար , զայրացկոտ մրմունջքի մը պէս : Յետոյ ամպը հատուածներու բաժնուեցաւ յստակօրէն , կապոյտ ճառագայթումին մէջ նշմարելի , և որոնք կը կերպարանափոխուէին յամրօրէն ու կամաց կամաց աչքերուս ընտանի , ծանօթ ձեւեր կ'առնէին : Հոն , խորը , տղաքներ կը կենային , տղաքներու չուքեր , կռուի կողմը , մօրուքով ծերունի մը , կիներ . . . : Ուրկէ՞ կուգային այդ ստուերները և ի՞նչ էին , կը հարցնէր երեւակայութիւնս , զարմացումէն և սոսկումէն ապշահար : Մտածումս չվրիպեցաւ փոթորկոտ գիշերուան մը այդ այցելուներուս աչքերէն :

— Ո՛վ ենք և ուրկէ՞ կուգանք , ըսաւ խիստ ձայն մը , ձայն մը որ հանդարտօրէն և ցրտօրէն կը հնչէր : Յիշէ՛ : Մեզ չե՞ս ճանչնար :

Դիտեալ կամաց մը երեքրեցի , ուրանալ ձեւացնելով այդ ստուերներուն հետ ունեցած որ եւ է յարաբերութիւնս . Եւ անոնք օգին մէջ կը դառնային հանդիսաւոր պարի մը պէս , զոր մրրիկը վարած ըլլար Հազիւ նշմարելի դիմաստուերներ , կիսովին թափանցիկ , դէպի իմ կողմս կը խուժէին անշուշտ : Յանկարծ ատոնց մէջէն նշմարեցի ծերունի մը , կոյր ծերունին , կորաքամակ ծեր կնոջ մը գօտիէն բռնած , որ մեղաբանքով լեցուն աչքերով երեսս կը նայէր : Իրենց ցնցոտիները փափլուն ձիւնահատիկներով ծածկուած՝ շուրջներին պաղութիւն մը կը սփռէին : Դիտէի թէ ով էին անոնք : Բայց ինչո՞ւ համար հոտ կը գտնուէին :

— Հիմակ մեզ ճանչցա՞ր :

Չէի գիտեր թէ փոթորիկին ձայնն էր զոր կը լսէի , թէ խիղճիս ձայնը . բայց այդ ձայնը խրոխտ չեշտ մը ունէր , որ զիս նուաճեց :

— Այսպէս , հասկցա՞ր թէ ով ենք : Եւ միւսներն ալ քու պատմութիւններուդ զիւցաղներն են , տղաքներ , կիներ և մարդեր , զորս տանջել տուած ես , քու գրութիւններդ կարդացողներուն հաճոյք մը պատճառելու համար : Աչքերդ բաց , նայէ՛ քու առջեւէդ պիտի անցնին , և պիտի կարենաս դատել , թէ որքա՛ն բազմաթիւ և խղճալի են քու երեւակայութեանդ արտադրութիւնները :

Այն ատեն ստուերներ սկսան առաջանալ . առաջինները երիտասարդ տղայ մը և պղտիկ մըն էին , երկու խոշոր ձիւնածաղիկներու պէս , որոնք լուսալիր պայծառութիւն մը կը սփռէին չորս կողմերին :

— Ահա՛ երկու տղաքներ, դորս մեկուցելիս պատուհանին առջին տունի մը, որուն մէջ Ծնունդի ծառ մը կը չողջողար, կը յիշես, անոնք զմայլանքով դիտած էին, և իրենց փափաքէն խելայեղ ստուած մնացեր էին :

Իմ սիրական վիպային անձերս անցան առջեւէս, առանց աղմուկ հանելու, և կապոյտ փափուլումին մէջ աներեւութացան: Անոնց ետեւէն ներկայացաւ հիւժած կին մը, մաշած զուռնատ դէմքով :

— Ասիկա, այն անձկօրէն սպասուած մայրն է, որ Ծնունդի գիշերը իր դաւանիներուն խաղալիկներ տտրած միջոցին մարած ինկած էր ճամբուն վրայ :

Սոսկումով և արգահատանքով կը դիտէի ստուերը :

Եւ խումբը կը շարունակէր անցնիլ : Անողոք ձայնը հետզհետէ աչքիս առջեւ կը պարզէր արամութեան դործերուս դիւցազնները : Եւ այս ուրուական-դիւցազնները աչքիս առջեւէն կ'առաջանային, իրենց ճերմակ հագուստները ծածանեցնելով օդին մէջ: Կը դողդղայիլ ցուրտէն, որ կը կաթէր չիթ չիթ, թախճաղին և լռանիստ ստուերներէն . . . : Իրենց դանդաղ շարժումները և իրենց տարտամ նայուածքներուն անպատում անձկութիւնը սիրտս կը ճնշէին: Ի՞նչ կ'ուզէին ուրեմն ինձմէ. ի՞նչ էր այդ երևոյթին նշանակութիւնը: Վերջինը, կոյր ծերունին, ձիւնէն փայտացած ցնդոտիներով, ինծի մօտեցաւ, և սկսաւ դիտել զիս իմ աղօտ, խոշոր աչքերովը: Մորուքը ամբողջովին կը պսպղար սառոյցի թեթեւ խառով մը և սառի կտորներ կը կախուէին բերնին քովերէն: Պառաւլին դէմքին վրայ մանկական երջանիկ ժպիտ մը կը գծագրուէր, բայց այդ ժպիտը սառած, թանձրացած էր այտերուն անայլալ խորշոմներուն մէջ: Վերջապէս ուրուականները անհետացան օդին մէջ, բայց միբիկը կ'երգէր անդու իր մեղամաղճոտ յանկերզը և իմ հոգիիս մէջ կ'արթնցնէր ընդլզումի զգացում մը: Լուսնեան և քունի շողիին մէջէն դիտեցի բոլոր այս ուրուացուցութիւնները, բայց հիմակ ներշնչուած էի և կ'ուզէի խօսիլ: Ստուերները դարձեալ համախմբուեցան և անորոշ ամպի մը երևոյթը տուին, ուր կը նշմարէի ամէն գոյնէ աչքեր, իմ գիրքերուս անձերուն աչքերը, որոնք սրանդուլթիւնով երեսս կը նայէին: Հետզհետէ կը սկսեային և ինքզինքս ամօթապարտ կը զգայի այս մեռած և անշարժ նայուածքներուն տակ:

Փոթորիկը ա՛լ չէր գոռար. և բոլոր ձայները անէացան իրեն հետ: Ա՛լ չլսեցի ժամացոյցին միօրինակ թիքթիքը, ոչ ձիւնին շշուկը և ոչ ալ ինծի հետ խօսող ձայնը: Լուսնինը կատարեալ էր. տեսիլը առկաի կը կենար օդին մէջ և կ'արծես խորհրդաւոր շարժումի մը կը սպասէր: Ասիկա երկար պեւեց, և չէի կրնար նայուածքս տեսիլէն անջատել, մինչև որ պոռացի վերջապէս.

— Անտուած իմ: Ինչո՞ւ այս ամէնը: Ի՞նչ իմաստ կայ անոր մէջ:

Այն տտեն, անողոք և մեղմ ձայնը հնչեց դարձեալ .

— Դո՛ւն իսկ պատասխանէ քու հարցումներուդ : Ինչո՞ւ համար գրեցիր այդ ամէնը : Ինչո՞ւ, առանց իրական ցաւերը, կեանքի շօշափելի և տեսանելի դժբախտութիւնները նկարագրել բաւականանալու, նոր չարչարանքներ ստեղծեցիր և անոնց վրայ կը խօսիս հանրութեան, ջանալով ներկայացնել քու տխրաշունչ քմայքներդ, իբր թէ իրականութեան մէջ գոյութիւն ունենային անոնք : Նպատակդ ի՞նչ է : Մարդկային սիրտին մէջ մնացած քաջութեան մնացորդները կ'ուզես մեռցնել, թէ բարեխառն մի յոյսերէն զրկել զանոնք, բոլորովին ցոյց տալով չարը, միտ'յն չարը : Թերեւս դուն՝ որ գրականութիւն կ'ընես, քու դրականութիւնովդ ու երկերովդ լոյսի և յոյսի թշնամի մըն ես և հաճոյք կը զգաս կարելի եղածին չափ մեղամաղձութիւններ և արտմութիւններ հնարելու՝ անգուշ, մարդկային հոգիներու պատրանքը աւելցնելու համար : Կ'ատեն՝ս արդեօք մարդերը, որոնց մէջ մեռցնել կ'ուզես ապրելու փափաքը, ներկայացնելով անոնց կեանքը իբր համակ փորձութիւն : Ի՞նչ է միտքդ : Ըսէ՛ :

Սարսափահար եղած էի մէկէ՛ն : Արտասովոր մեղադրանքներ, չէ՛ : Ամէն մարդ միեւնոյն կերպով կը գրէ, մտնաւանդ Ծնունդի գիշերուան պատմութիւնները : Պղտիկ աղքատ աղայ մը կ'առնեն կամ աղքատ աղջիկ մը և դայն ցուրտէն կը մեռցնեն որ և է տեղ մը, պատուաններուն առջև մեծահարուստի մը տունին՝ ուր Ծնունդի լուսաւոր ծառը կը շողշողայ : Ասիկա սովորութիւն մըն է : Ես ալ անոր հետեւեցայ . սա է ամբողջ եղելութիւնը : Ինքզինքս արգարացուցած կը զգայի ձայնին առջև, և որոշեցի բացատրել անոր Ծնունդի պատմութիւններուս իմաստը :

— Մտիկ ըրէ՛, ըսի, չեմ գիտեր թէ ո՞վ էք՝ և չեմ ուզեր ալ գիտնալ : Ինծի հարցումներ ուղղեցէք, պիտի պատասխանեմ անոնց և անկէ վերջը կը յուսամ որ թող պիտի տաք որպէս զի գիշերուան մնացած մասը հանդարտ քնանամ : Այս թշուառութիւնները, անձկութիւնը նկարագրելով ուրիշ բանի վրայ չեմ խորհիր, բայց միայն մարդկային և արգահատանքի զգացումներ արթնցնել ուրիշներու սիրտին մէջ . երբեմն կը փորձեմ սիրտերը չարժել, աւա՛ղ, անգութ և անզգայ սիրտերը :

Արտակարգ ու ահաբեկիչ իրարանցում մը տեղի ունեցաւ ստուերներուն մէջ. կը դիտէի զիրենք, ապչահար, առանց բան մը հասկնալու : Անձայն լռիկ պար մը կը դարձնէին, իբր թէ վայրկեանաբար ամէնքն ալ տենդի նոպայէ մը լռնուած ըլլային : Կը գալարուէին կարծես կռուիլ ուղեւով մըրիկին դէմ, որ զիրենք պիտի քչէր տանէր : Եւ քամին կը գոռար, կը սուլէր, կը քրքջար, կը մռնչէր : Ու շուքերը կը դողդղային . իրենց անզգայ աչքերը միշտ մեռած կը մնային,

հակառակ անոր որ իրենց դէմքերուն տկար դիմատուերները ուրուա-
կանի ահուկի ծամածուռներով կը կծկուէին : Պոսթորափայլ ու կա-
պոյտ լոյսն ալ կը դողդղար ստուերներուն անհասկնալի ու լռիկ պարին
հետ : Պաղ քրտինք մը ողողեց ամբողջ մարմինս և մազերս ցցուեցան :

— Կը խնդան կոր , ըսաւ անողոք ձայնը :

— Ի՞նչ բանի վրայ , հարցուցի , հազիւ լսելի եղանակով մը :

— Քո՛ւ վրադ :

— Ինչո՞ւ համար :

— Տղայակսն խօսքերուդ միամտութեանը վրայ . . . : Երեւա-
կայական դժբախտութիւններ ցոլացնելով , կը փափաքիս աղէկ զգա-
ցումներ արթնցնել , անանկ մարդերու սիրտերուն մէջ , որոնց համար
արդէն իրական դժբախտութիւնները չառ աղորական տեսարաններ են :
Խորհէ՛ ուրեմն , երկար առնէ ի վեր է որ ատոր համար կ'աչխատուի :
Երբ բիրտ իրականութիւնը չյուզեր մարդիկը և չվիրաւորեր անոնց
հոգին , ուրեմն քու քմայքներդ են որ պիտի լուսաւորեն մարդերուն
խիղճը : Եւ միտքէդ կ'անցընես որ կը յաջողիս :

Ստուերներուն համը քրքիջը կը շարունակուէր . . . : Ինծի անանկ
կը թուէր որ պիտի չվերջանար յաւիտեան . . . : Բնիկ մահուան օրը պիտի
տեսնէի զայն սարսափահար : Փոթորիկն ալ իր կարգին կը ծիծաղէր
չնականօրէն , ականջներս խուլցնելու աստիճան : Եւ անողոք ձայնը կը
խօսէր , կը խօսէր անդադար . . . : Ուղեցի այս հետապնդումէն խոյս
տալ : Սոսկալի տխրութիւն մը , բարկութեան խառնուած , կը չարչա-
րէր զիս : Եւ յանկարծ , անկողինէս գլտորելով մութ անդունդի մը մէջ
կը գահավիժէի , գլուխս վար , անկումին ուժգնութենէն չնչասպառ :
Սուլումներուն , ոռնումներուն և ստուերներուն լպիրշ քրքիջը կը հա-
լածէր զիս : Անանկ կուգար ինծի որ աղջամուղջին մէջէն զիս կը
դիտէին :

Արշալոյսին , սաստիկ գլխու ցաւով մը և տառապագին զգայնու-
թիւնով մը արթնցայ : Իմ առաջին չարժումս եղաւ թերթերը առնել ,
որոնց վրայ գրած էի կոյր ծերուկին և կնոջը պատմութիւնը և
պատուել , առանց անգամ մըն ալ կարշալու : Պատուհանէն դուրս նե-
տեցի թուղթի այդ կտորուանքները , որոնք առատան սիւքէն ցրուե-
ցան մոլորուն : Դիչերային մղձաւանջի մը ազդեցութիւնով աներեւու-
թացան գացին բոլոր այն տեսիլքները՝ որոնք երեւակայութեանս առջև
պատկերացուած էին , բոլոր տրամուլթիւնները , բոլոր տառապանքները ,
բոլոր հետապնդումները , որոնց անվերջանալի պատմութիւնը ուղած էի
գիրի առնել :

Թարգմ. Ն. ԵԱԶԷՃԵԱՆ

Այսօրսընէ Մասիս մէջ կը սկսինք նոր էջ մը , որ իր գրական նշանակութիւնովը ու արժէքովը ընթերցողներուն մեծ հաճոյք մը պատճառելու բնոյթը ունի : Օտար գրական հոյակապ դէմքեր , որոնք մեր մէջ ալ ժողովրդականութիւն կը վայելեն եւ զորս ընթերցող հասարակութիւնը կը հանչնայ լոյս անունով, գրեթէ անծանօթ կը մնան իրենց գրական գործունէութեան իսկական արժէքով : Ամէն մտադ գիտէ թէ Տիւմա Որդի մը կայ : Իրենա կարդացած է ալ իր մէկ գործը եւ գտնուած խանութիւնը Տիկինի ներկայացումին . բայց չգիտէ լիովին թէ ո՞վ է Տիւմա Որդի եւ ի՞նչ բրած : Մասիսի ծրագիրն է իր ընթերցողներուն ծանօթացնել, օտար հեղինակաւոր գրագէտներու լաւագոյն ուսումնասիրութիւններէն քարգման. ուսած, այս կարգի օտար հոյակապ դէմքեր , իրենց գրական գործունէութեան ամբողջութեանը մէջ, յոյուածներու շարքով մը, որուն վառահ կենդանակիր ընդունելութեան արժանանալուն , բանի որ այդ շարքը պիտի ըլլայ մեր մէջ աննախընթաց ձեռնարկ մը , ուր պիտի երեւան իրարմէ համբաւաւոր գրական դէմքեր , մեր մէջ մինչեւ այսօր պէտք եղածին պէս չներկայացուած : Ուսումնասիրութիւններու այս շարքը կը սկսինք Տիւմա Որդիով, որ աճնչաւի լայն ժողովրդականութեան մը եւ հաշակի մըն է հիւսցած մեր ժողովուրդին մէջ :

ԱՆԵՔՍԱՆՏՐ ՏԻՒՄԱ ՈՐԴԻ

[ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ]

Ա. — Կ Ե Ա Ն Ք Ը

Յանդուգն եւ նորարար (novateur) տաղանդով արամերդակ հեղինակը , յաճախ առեղծուածային , միշտ սրամիտ եւ փայլուն , երբեմն խորունկ բարոյախօսը որ Ալեքսանտր Տիւմա Որդի կը կոչուի , ծնած է 1824ին : Մարդաստմարի տօմարին մէջ արձանագրուած էր Ալեքսանտր անունով , «ապօրէն զաւակը Օր. Մառի Բաթէնին Լըպայի» : Մայրը երեսուն տարեկան էր , գեղանի , խիստ ժրաջան , անուս կարուհի մը : Դալով հօրը , որ այն ատեն օրինապէս անձանօթ էր , յաղթանդամ երիտասարդ մըն էր , խառնածինի գոյնով , գուռզ մազերով , եւ անայլալ ինքնավստահութեան մը կը միացնէր յորդանոս զուարթութիւն մը , ապրելու սաստիկ ուրախութիւն մը եւ ուշիմութիւն մը՝ որուն փայլուն ապացոյց՝ երբ պիտի տար շատ չանցած : Անունն էր Ալեքսանտր Տիւմա Տէյլի աը Լա Բայէտընի եւ հարիւր Փրանք-ամաթոչակով կը ծառայէր Օսկէանի Դուքսին քով , իբր ընդօրինակիչ : Մանուկ հասակին մէջ կորսնցուցած էր հայրը , անվէհեր զօրավար մը , հսկայ հասակով եւ վիթխարի խառնածին մը , որուն արձան մըն ալ կանգնեցին : Վերջերք իր Յիշատակներուն մէջ , Ալեքսանտր Տիւմա կը գրէր . «Մինչ Մանրան սիէի Դուքսը կը ծնէր , ինծի ալ աշխարհ կուգար Շառլօի Դուքս մը» : Պէտք է ըսել որ՝ Տիւմա իր «Շառլօի Դուքս»ով շատ հետաքրքրուելու երեւոյթ չունեցաւ մինչեւ 1831 մարտ 17 , որ ատեն յատուկ վառ-

բազիրով իրր իր ապօրէն զաւակը ճանչցաւ դեռատի Ալեքսանտրը , որ անկէ ետքը կոչուեցաւ Ալեքսանտր Տիւմա : Այդ պահէն սկսած , Ալեքսանտր Տիւմա Հայր մը և Ալեքսանտր Տիւմա Որդի մը մէջտեղ եկան , —ինչպէս կոչուեցան աւելի վերջը— և յայտնի է թէ ի՞նչ սիրուն անուն մը շինեցին երկուքն ալ ֆրանսական գրականութեան մէջ :

1894ին , Ֆիկսառօի գրած քանի մը տողով Ալեքսանտր Տիւմա Որդի կը պատմէ թէ ի՞նչպէս ուսում առաւ : «Եօթը տարու չկայի , կ'ըսէ , երբ գիշերօթիկ դրուեցայ Վօդէի դպրոցը : Անկէ , ինը տարեկանին , անցայ Սէն-Վիքթօր Վարժարանը , դարձեալ գիշերօթիկ , զոր կը վարէր Բառքէն Կուպօ , բարեկամ և աշխատակից հօրս՝ Richard Darlington դործին մէջ , Տինօ անունով : Այս գիշերօթիկ վարժարանը , որ երկու հարիւր յիսուն աշակերտ կը պարունակէր և որուն այլանդակ բարձրը փորձեցի նկարել P'Affaire Clémenceauի մէջ , կը գրաւէր այսօրուան Քաղինօ ար Բաւիլին և Բօլ Նօսին մամուլ տեղը . . . Տասնըհինգ տարեկանին , ելայ այդ դպրոցէն և մտայ Հէնօն գիշերօթիկ վարժարանը , որ դոյութեանէ դադրած է այսօր : Գօլէթ Պոլուպօնի մէջ էր որ (այսօր Քոնտորսէ) աւարտեցի ուսումս , որովհետեւ յաճախած երկու գիշերօթիկ վարժարաններս այդ Գօլէթին դասընթացքին կը հետեւէին : Ուսում չեմ առած ո՛ր և է պետական մեծ վարժարանի մէջ : Ո՛չ իսկ պսակաւորի վկայական ունիմ » :

Կարելի չէ ըսել թէ Տիւմա Որդի ուսանողութեան միջոցին փայլուն յաջողութիւններ ունեցաւ , թէ զօրաւոր էր չարադրութեան մէջ : Իր անկանոն ծնունդը և իր միջին ծագումը վիրաւորիչ ակնարկութեանց նիւթ կը հայթայթէին իր դասընկերներուն , որոնց ծաղրանքներէն սատոյկ կը տառապէր . բայց ըմբօստացման թափերէ ալ զուրկ չէր : Թէ՛ն չունէր ո՛չ բարձր հասակը ո՛չ ալ ուժը իր պապուն և հօրը , բայց յաղթանդամ էր , ուժեղ , ճարտար՝ մարմնամարզի մէջ , նոյնչափ փութկոտ անդրադարձ պատասխանի , որչափ ինքնապաշտպանութեան մէջ : Եւ հաւանօրէն այն ատեն աւելիներ պատահեցան որ ըսէր ա՛յն , ինչ որ կը պատասխանէր օր մը մէկուն՝ երբ այս վերջինը չարամտօրէն կը հարցնէր թէ իր հայրը խառնածին չէ՞ր .

— Այո՛ , պարոն , հայրս խառնածին էր , մեծ հայրս՝ խափշիկ , մեծ հօրս հայրը՝ կապիկ : Իմ աղգաբանութիւնս կը սկսի հոն ուր կը վերջանայ ձերինը :

Իր արձակուրդի օրերը կ'անցընէր մօրը քով , յաճախ ընկերակցութեամբ կարուձեւի արհեստանոցին մէջ հաւաքուած գործաւորուհիներու : Երբ ուսումը աւարտեց , 1841ին , հօրը քով բնակելու գնաց : Երեք Հրացանակիրներուն հեղինակը , ինչպէս յայտնի է , կարծես իրեն նշանաբան ընտրած էր «անկարգութիւն և հանճար» : Յիմարալար կը ծախսէր , առանց երբեք հաշուելու , ապրելով դերասանուհիներու և

գիւրահաղորդ կիներու աշխարհի մը մէջ, միշտ բարեացակամ իր ազուն հանգէպ, որուն համար հայր մը չէր, այլ հաճոյքի ընկեր մը : Վեց ամիս վերջը Տիւմա Որդի հեռացաւ հօրենական օջախէն, մինակ աղքեղու համար . բայց նորէն յաճախ կու գար «Պարբերաբար կը գժտուինք, կը գրէ Մոնթե Քրիսթօի հեղինակը, և ան, անառակ ազուն պէս, կը հեռանայ հօրենական տունէն : Այդ օրը ես հորթ մը կը գնեմ, և լաւ մը կը պարարտացնեմ զայն, վստահ ըլլալով թէ ամիս մը չանցած պիտի վերադառնայ և իր բաժինը պիտի ուտէ : Իրաւ է որ չար լեզուներ կ'ըսեն թէ հորթին համար է որ կը վերադառնայ և ոչ թէ ինծի համար, բայց ես գիտեմ ընդիքս» : Չորս հինգ տարի երիտասարդը կրեց իր տարիքին բոլոր յախտակութիւնները . բայց որովհետեւ խոհուն և արթուն, վերլուծող և պատճառաբանող միտք մը ունէր, չատ մը իրապաշտ, կենդանի դիտողութիւններ քաղեց իր ապրած կզական աշխարհին վրայ, և շատ չանցած առիթը գտաւ զանոնք շահագործելու : Ազուոր օր մը տեսաւ որ իբր 50,000 Ֆրանք պարտք ունիւ Ջորհոլրաժ՝ գնաց գտաւ հայրը, որ ըսաւ խնդալով .

— Ա՛յդ է եղածը . լա՛ւ . ինծի պէս ըրէ . աշխատէ և պարտքդ պիտի վճարես :

«Այս պղտիկ միջադէպը որոշեց իմ ասպարէզս, կը պատմէր յետոյ Տիւմա Որդի . և որովհետեւ բա՛ն մը ընել չէի գիտեր, գրականութիւն ըրի » : 1845ին պղտիկ թատերախաղ մը գրեց մէկ արարով, *Le Bijou de la Reine*, որ ներկայացուեցաւ Փարիզէլլան թատրոնին մէջ և որ կը գտնուի իր թատերական ամբողջական գործերուն առաջին հատորին մէջ : Կը գրէր նաեւ ռոմանտիկներ, որոնք շատ միջակ էին : Իր կարգ մը բանաստեղծութիւնները հրատարակուեցան երկու պարբերականներու մէջ : Աւելի վերջը, 1847ին, զանոնք ամփոփեց սակաւատիպ հատորի մը մէջ, որ այսօր անգտանելի է և որուն անունը գրած էր *Երիտասարդութեան Մեղիերը* : Վերջապէս, Բոնէսի մէջ հրատարակեց *Գաւառացիի մը Նամակները* : 1846ին, Ալեքսանտր Տիւմա Հայր՝ Լուի Ֆրիլիբի կառավարութեան կողմէ հրաւիրուեցաւ ներկայ դառնալ Մոնթրանսիէի Դուքսին ամուսնութեան՝ Սպանիոյ արքայազուն իշխանուհիին հետ . և այս առիթով իր տրամադրութեան տակ զրին պետական նաւ մը : Տիւմա անմիջապէս իրեն ընկեր առաւ իր բարեկամները՝ Մաքէ և Նկարիչ Պուլանմէ : Ճամբան ազուն հանգիպելով, ըսաւ թէ հետը մէկ տեղ պիտի տանի : «Ո՛ւր» հարցուց երիտասարդը : — «Սպանիա» : — «Սպանիա» : Մատրիտի մէջ իրենց միացան Ժիւս և Տէպաուզ : Այս ճամբորդութեան առիթով Տիւմա Որդի կը գրէ . «Ես չիացած ազան էի հօրս բոլոր այս բարեկամներուն, անհոգ, ծոյլ . ուրիշ բան չէի երեւակայեր, եթէ ոչ յաւիտենական երիտասարդութիւն, յաւիտենական ուժ, յաւիտենական զուարթութիւն : Օրն ի բուն կը խնդայի, ամբողջ

գիշերը կը քնան այի , եթէ ոտանաւոր զրելու պատճառ մը չունենայի» : Տէպառօլ ալ իր կարգին կ'ըսէ իր ճամբարդական նօթերուն մէջ . «Տիւմա մասնաւորապէս կը սիրէ ունկնդրել իր զաւկին , որուն մտքին կարողութիւնը շատ աւելի զօրաւոր է , քան որչափ կարելի է երեւակայել . խիստ կը հպարտանայ անով և իրաւունք ունի . սրտաւրին ուրախութեամբ կը խնդայ անոր պաշտելի յանկարծաբանութիւնները լսած ատեն» : Այդ յանկարծաբանութիւններէն մէկը մասնաւորապէս խայթիչ է : Մատրիտի մէջ , կամուրջէ մը անցած ատեն , Տիւմա Որդի տեսած էր Մանսանարէզ գետին ցամաքութիւնը , որ առասպելական դարձած է : Օր մը , մինչ ցլամարտի մը ներկայ կը գտնուէր իրիկուան դէմ , զաւաթ մը ջուր ուղեց վաճառորդէ մը . կէսը խմեց և գաւաթը ետ տուաւ ըսելով . — «Մնացածը Մանսանարէզի տուէք իմ կողմէ» :

Իր ցնծալից ընկերներուն հետ Ալժէրիա այցելելէ ետքը , Բարիզ դարձաւ : Այն ատեն քսաներկու տարեկան էր : Որոշած ըլլալով վերջ տալ անօգուտ և անզրաղ կեանքի մը , եռանդով գործի սկսաւ : Իր առաջին վէպը , որ կարգ մը կէտերով իր հօրը վէպերը կը յիշեցնէր , հրատարակուեցաւ 1846-1847ին , Չորս կիներու եւ Թուրակի մը Արկածախնդրութիւնները անունով : Մինչև 1855 ուրիշ տասներհինգի չափ վէպէր ալ հրատարակեց : 1844ին իր յաճախած չրջանակին մէջ ճանչցած էր Մաուրի Տիւրլէսին , որ ճիշդ իր ծնած տարին ծնած էր և կուրծքի հիւանդութենէ մը մեռած՝ ճիշտ այն պահուն , երբ ինք Ալժէրիայէն կը դառնար : Այս մանկամարդ կնոջ յիշատակը իրեն ներշնչեց մէկը այն ամէնէն սրտառու յիշատակներուն որ հրատարակուած ըլլայ Մանօն Լեաֆօն ի վեր : Սէն Ժէռմէն , պանդոկի մը մէջ էր որ երեք-չորս շաբաթէն գրեց Գաւնէրիստի Տիկինը , որուն հրատարակութիւնը (1848) գրական ճամբարի դէպք մը եղաւ : Անդօնի Պէռօ , որ այն ատեն խիստ ճարտար թատերագրի համբաւ կը վայելէր , զաղափարը յղացաւ այս վէպէն առամ մը պատրաստելու՝ հինգ արարով և վեց պատկերով , նախաբան մըն ալ սկիզբը : Եւ պատրաստածը տարաւ Տիւմա Որդիի : Այս վերջինը չուղեց բնաւ իր անունը կցել ռամիկ թատերախաղի մը , որ ձուլուած էր մաշած կաղապարի մը մէջ : Պէռօի ետ տուաւ բերած թատերախաղը , և ինք ութը օրուան մէջ իրր թատերախաղ գրեց Գաւնէրիստի Տիկինը , ձեռքը անցած թուղթերուն վրայ : Եւ երբ խաղը ներկայացուցին , Պէռօ տարիներով վայելեց Նեղինակի իրաւունքին կէսը , մինչև որ Տիւմա կրցաւ անոր ժառանգորդներէն վերագնել իր իրաւունքներուն կէսը : Երբ Պէռօ Գաւնէրիստի Տիկինէն թատերախաղ մը հանելու խօսք ըրած էր , Տիւմա Հայր գոչած էր . «Ասոր մէջ թատերախաղի նիւթ չկայ բնաւ» : Ուստի իր զաւակը չհամարձակեցաւ ցուցնել իր ձեռագիրը : Դիպուածով էր որ ինք իմացաւ անոր գոյութիւնը : Եւ ահա թէ ի՞նչպէս , նոյն ինքն Տիւմա Որդիի պատմութեան համաձայն . —

«Կատարելապէս հպարտ աշխատութեան այս փառաւոր թափէն՝ բայց քիչ մը ամօթանար՝ հօրս կարծիքը բանի տեղ դրած չըլլալուն համար, ձեռագիրս իր ընդօրինակիչին կը տանէի, ինքզինքիս խոստանալով ամենաբացարձակ գաղտնիք պահանջել այս վերջինէն: Բայց հազիւ ընդօրինակիչին սենեակը մտած էի, երբ յանկարծակիի եկայ հօրս կողմէ, որ ինքն իրմէն կ'ած էր, ինքն ալ ձեռագիր մը բռնած: Ա'լ ուրիշ բան չէի կրնար ընել, եթէ ոչ խոստովանիլ անհնազանդութիւնս: Հայրս կողում ընելով իր բովանդակ հեղինակութեան, պատիժներուն ամէնէն անգութը տնօրինեց ինծի, բռնադատելով որ թատերախաղս իրեն կարգում նոյն պահուն իսկ: Պէ՞տք է ըսել. երկրորդ արարուածին, աչքերէն արցունքներ հոսիլ սկսան: Երրորդ արարուածին, աղու մը պէս կուլար: Բայց հարկադրուեցայ ընդհատել և խիստ սարկողական ժամադրութեան մը վազել: Հայրս խոստացած էր ինծի սպասել՝ վերջին երկու արարուածներուն տեղեկանալու համար: Վերադարձիս վրիզս նետուեցաւ: Չէր կրցած դիմադրել խաղին վերջը դիւնալու անհամբերութեան: Եւ, արցունքներուն մէջէն խնդալով, յայտարարեց թէ՝ աճադին յաջողութիւն կը նախատեսէ ինծի համար: Միեւնոյն տոնն հասկցուց ներկայացման դժուարութիւնները: Ըսածը ճիշդ էր: Խաղը ահագին դժուարութեամբ կրցաւ թատերաբեմ հանուիլ, բայց առաջին ներկայացման իրիկունն իսկ խանդավառ ընդունելութիւն գտաւ»:

Գլխաւոր դժուարութիւնը այն էր որ տնտեսականութիւն կը նկատուէր բեմ հանել վաղեմի լուացարարուն մը, որ տարին 50,000 ֆր. կը ծախսէր: Այս առարկութիւնը շատ չտեսեց: Խաղը Վօտվիլի մէջ ներկայացուեցաւ 1852ին և հրաշալի յաջողութիւն գտաւ: Նոր չըջան մըն էր որ կը բացուէր ժամանակակից թատրոնին մէջ: Այդ օրէն սկսած՝ Տիւմա Որդի համաւի տիրացած էր:

Նախընթաց տարին երիտասարդ գրագէտը բաւական մեծագործ սիրավէպ մը ունեցած էր: Խենդի պէս սիրահարած էր. ուռս կոմսի մը կնոջ, կոմսուհի Լիտիա Նէսէլրօտի. կոմսուհին հրաման ստացաւ Ռուսիա դառնալ: Տիւմա կտեւէն գնաց, բայց զինքը կտ դարձուցին: Այս արկածախնդրութենէն ներշնչուելով է որ գրեց Diane de Lys վէպը: Ժամանակ մը վերջը այցելութիւնը ընդունեց ուռս կնոջ մը, տիկին՝ Նարիչքինի, որ, Բարիդ հանգիստը ըլլալով, յիշատակներ կը բերէր իրեն՝ կոմսուհի Նէսէլրօտի կողմէ: Երկուքը մէկտեղ ժամերով խօսեցան սիրոյ վրայ, իրարու հաճելի եկան, և, քանի մը տարի վերջը, գեղանի օտարունին Տիւմայի կինը կը դառնար:

ՕՏԱՐ ԲԱՐՔԵՐ

ԵՐԿՈՒՔԷՆ Ո՞ՐԸ

Կիրակի օր մը , խորհրդաւոր դէմքով մարդուն մէկը կը մտնէ Լուվրի Թանգարանը , և հետաքրքիր այցելուններու խառնուած՝ կը սկսի զիտել արուեստի նրաշալիքները : Դէմքը մտածկոտ արտայայտութիւն մը առած էր , կարմրած վերջալոյսներու անուշ վարդագոյնով մը : Յանկարծ իր քովի զրպանէն դաշոյն մը հանելով կը յարձակի Բուսէնի հուշակաւոր **Ջիւնդեղին** վրայ և վերէն վար կը պատռտէ , կ'աւրշտկէ , կտոր կտոր կ'ընէ : Պահապան մը կը մօտենայ և զփռարութիւնով հազիւ կրնայ ձեռքէն դաշոյնը խլել :

—Վե՛րջապէս , կը յարէ խորհրդաւոր դէմքով մարդը ժպտելով , վե՛րջապէս . . . Եւ տեսէք ի՞նչ կ'ընէ պահակատունը՝ ուր կը փոխադրուի նոյն վայրկեանին :

—Երեւոյնըմէկ տարեկան եմ , կ'ընէ , և նպարավաճառի աշկերտս իմ նախկին դիրքս կորսնցուցած ելլալով , ա՛լ չկրցայ տիրանալ նորէն անոր : Ամէն կողմէ լքուած , մոռցուած տեսնելով ինքզինքս ու յետոյ ապաստանարանի մը , հացի շերտի մը կարօտ՝ խորհեցայ որ ամէնէն աղէկ բանը պիտի ընեմ՝ ինքզինքս բանտարկել տալով :

—Բայց , կը պատասխանէ , ոստիկանապետը , ատոր համար պէտք չկար արուեստի գործ մը ոչնչացնել :

—Այո՛ , կը մրմնջէ մարդը , կրնայի կազի կտուց մը ջախջախել , օրինակի համար , սակայն ատիկա սովորական բան մը պիտի ըլլար : Եւ յետոյ , ան ատեն ո՞վ վրաս պիտի խօսէր :

Ու եզրակացնելու համար ,

—Ընկերութենէն վրէժս լուծել ուզեցի , ընկերութենէն , որ արհամարհանք միայն կ'ազդէ ինծի :

Ոստիկանապետը կը հարցնէ Թէ ինչո՞ւ իբր բարկութիւնը Բուսէնի նկարին վրայ Թափեց :

—Օ՛հ , կը պատասխանէ խորհրդաւոր մարդը , կարեւորութիւն չունէր ինծի համար : Ընտրութիւն մըն ալ չըրի , ամսկ , ձեռքիս տակ անիկա՛ եկաւ . . .

Երեւակայեցէ՛ր որ , զիտել կուտայ ֆրանսացի քրոնիկագիր մը , այս մարդը կրնար նաեւ ոչնչացնել Վինչիի Joconde-ը կամ Շարտէնի Bénédictin-ն : Եւ իր պատիժը ի՞նչ պիտի ըլլար . հարկըրէն մինչև հինգ հարիւր ֆրանք տուգանք և մէկ ամիսէն մինչև երկու տարի բանտարկութիւն :

Բարեգեւան ոճիրներու և եղեռնագործութիւններու անձիւ շարքէն ուրիշ մըն ալ առնելով միայն , կ'ուզեմ ցոյց տալ տարբերութիւնը որ կրնայ գոյութիւն ունենալ այդ տեսակ ոճրագործութիւններու մէջ :

Սօլէյլան անունով բարեկազմ երիտասարդ մը իր ընտանիքին բարեկամներէն մէկուն կը ներկայանայ օր մը և կը խնդրէ որ տուտակու տարեկան Մարթա անուն աղջիկին իրեն յանձնուի , Պա-Թա-Գլանի նուագահանութիւնի ցերեկոյթին կնոջը ընկերանալու համար : Ինք ժամը երկուքին ստիպուած ըլլալով գործին երթալ , չպիտի կրնար կնոջը ընկերակցիլ : Անսովոր բան մը չէր ասիկա : Պզտիկը իրեն կը յանձնուի : Քանի մը ժամ ետքը կը վերադառնայ , առանց Մարթային : Կը պատմէ որ անակնկալ պատճառով մը կինը չէր կրցած Մարթան նուագահանութիւն տանիլ , այնպէս որ ստիպուած էր ի՛նք ընկերանալ անոր : Վայրկեան մը աղջիկը իրմէ բաժնուած էր բնական պէտքի մը համար և ալ չէր վերադարձած : Սօլէյլան փնտռած էր ամէն կողմ և վերջապէս իր տունը զացած նկատած էր : Էրպէլտինկ ընտանիքը , —Մարթայի ծնողքը , —գոհ չմնաց այս պատմութենէն : Հակառակ ասոր՝ ելան փնտռելու զայն , սրտատրտի , ցնցուած զգայականութիւնով : Ճամբան միշտ կը կրկնէր Սօլէյլան .

—Եւ մտածել որ , ե՛ս եղայ պատճառը անոր տուն չվերադառնալուն . . .

Ճշմարտութիւնը սա էր Թէ՛ Սօլէյլան աղջիկը իր տունը տարած և բռնաբարած էր անոր պատիւը : Պզտիկ , սիրուն սրբաբան հեշտանքի ցաւազին պոսէ մը ետքը զալարուած էր ճիւղաղին բազուկներուն մէջ : Սօլէյլան յօշոտեր էր ետքէն , Մարթայի բռնաբարուած , վայելուած , պրկուած մարմինը ու տարեր նամակատուն ձգելու էր , մէկուն հասցէին , Թարմ միսի տուփի մը պատրուակով :

կով : Այս հրէշը, երեւակայեցէ՛ք, ամուսնացած և զաւկի մըն ալ հայր է :

Դատաւարութիւնը կը սկսի : Կիները կը ստական օրուան ոճրագործէն : Եւ իրենց արհամարհանքը, ատելութիւնը թքնելու համար Սօլէյլանի երեսին, ամէն կողմէ, Բարիզի անկիւններէն, զիւղերէն, ամարանոցներէն կուգան թարմ ու բուրումնաւէտ արդուգարգերով : Դատաւարութեան սրահը կիներով լեցուած է զրեթէ : Ուրիշ ոչ մէկ դատ այսքան արտատովոր հետաքրքրութիւն արթնցոցած է իր շուրջը :

Գլուխը կտրելու վճիռը կ'արձակուի Պէռնշթայնի կողմէ : Սեւեր հագած, տոգոյն, տիտեր կին մը ամբողջէն կը զատուի պահ մը և կը գոչէ .

— Ե՛ս, ե՛ս պիտի մեռցնեմ զայն : Զաւակը անպատուեց :

Ու բազումներովը կը բարձրացնէ օդին մէջ պզտիկ սիրուն զաւակը, որ կը ժպտի անցած դարձածին անգիտակ :

— Աւելի աղէկ է որ շուտ մեռնի, հիմա՛, այս պահուս, կը գոռայ կինը :

Սօլէյլանի կինն էր ան, որ՝ եկած էր իր ստակումը, իր սարսափը յայտնելու :

Ոճրագործը պատասխանատու էր իր ըրածին : Նշանաւոր *alieniste* Տօթէօր Տիւփրէ՛ Սօլէյլանի յիմար չըլլալը ասացուցած էր շատ մը փաստերով : Զանկիւ աղար գտած էր իր կիրքերը կառավարելուն մէջ միայն : Սեռային բնագղը իր բով անուելի աստիճանի մը հասած է եղեր : Այնպէս որ ոճիրը գործած միջոցին ինք այնքան հասոյք զգացած է, որքան պզտիկ զոհը՝ տառապանք : Ինք այնքան վայելք խմած է շուշանի պէս թարմ, փափուկ աղջկան մը հեշտանքի բաժակէն, որքան Մարթա՛ ցաւ ու՝ դառնութիւն լացած՝ ամբողջ իրանը պրկելով, օձի զալարումներով երիտասարդին թեւերուն մէջ :

Ինչ որ ալ ըսէ Տօթէօր Տիւփրէ, միտքի հաւասարակշռութիւնը պահող մարդ մը չպիտի կենար այսքան անզօրէն, սաղաթելական եղանակով մը, տեղի տալ իր «սամարող, կնատ, հակածան» խառնուածքին, ինչպէս պիտի սիրէր ըսել մեր բանաստեղծութեան բարձունքին վրայ թառող ? յուսահատօրէն մահարոյր բռնիակ մը :

Բուսէնի *Schleier*ին բանդիչը կերպով մը միայն կրնային պատժել : «Իմ յիշատակի՛ս ուզեմ որ խօսողի՛ս համբաւամու ոճրագործին անունը չտալ բնաւ թերթերուն մէջ : Սակայն աղէկ գիտէք լրագրութեան ճամարտակութիւնները : Նոր բան մը յայտնելու փութկոտ լաւակնութիւնով, Եփեսոսի մեհեանը, նմանօրինակ մտածումէ մը զրդուած, այբող էրօսդատին այս յաջորդին պատկերը զրին առաջին օրէն իսկ . էջեր ամբողջ նուիրեցին, կենսագրութիւնը գրեցին, չմոռնալով յիշատակել նաև մարդուն ամբողջ գերդաստանին անունները : Ասիկա պարզապէս հաճոյք պիտի պատճառէ նկարին բոսնիչին : Իր նպատակին հասած պիտի ըլլայ : Ան էր արդէն իր ուզածը : Խօսուիլ, օրուան մարդը ըլլալ : Աւելի աղէկ պիտի ըլլար եթէ առանց մարդուն անունը տալու լրագրութիւնը տպաւորար այդ չարաղէտ հոսանքին դէմ :

Պատասխի կտոր մը էջեր իր կտոր կտոր ըրածը, ինչպէս դիտել կուտայ Ֆրանսացի բրոնիկագիրը : Ամբողջ երազ մըն էր . ամբողջ հանճար մը, ազգութիւն մը ներկայացնող, խտացնող նկար մը : Մարդասպան մը մինակ հոգի մը կը մեռցնէ . ասիկա հանճարը մեռցուց : Մարդը կեանք մը ունի, չափաւորուած, սահմանաւոր կեանք մը . իր շրջանը հարկեր սաչափ տարի է միայն . մինչդեռ արուեստի առարկայ մը շրջան չունի՝ և ո՛չ ալ չափուած կեանք մը : Սօլէյլան աղջիկ մը սպաննեց : Բուսէնի զուգահեռօրէն անհետացնողը՝ ազգի մը հանճարը : Առաջինը կիրքի, արիւնի յիմար այլասերած մըն է . երկրորդը փառքի, համբաւի, անունի ետեւէն վազող սոսկալի հրէշ մը : Մէկը դաշոյնը աղջկան մը կուրծքը կը մխէ, անոր անդամները կը յօշոտէ, կտոր կտոր կ'ընէ . միւսը անբաղդատելիօրէն գեղեցիկ ու աննման ճրաշալիք մը կ'ոչնչացնէ : Այս երկու ոճրագործներէն ո՞րը ամէնէն աւելի հրէշային կը նկատէք դուք, — հեշտանքի արիւնարբու ճիւղով, թէ նպարտութեամբ մեծամիտ ու մեծամուկ աշկերտը, Բուսէնի տխրահռչակ չարագործը :

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ

ԴԵՊԻ ԱՐՄԱՅ

Կը յուզէ հոգիս վերլիշումը այն օրուան՝ ուր ճամբայ պիտի խնայէր զէպի Արմաշի մենաստանը՝ որ իր գոյգ ուխտավայրերով կ'առնէր մեր ամէնուն բոլորանուէր իղձերը : Դպրեկանքի և Զարխախանի սրբանուէր ուխտավայրերը երկու զօրաւոր մագնիսացումներ եղած էին մեզի . մէկուն պատկառանքովը համակուած , միւսին պաշտելիութեանը երկրպագու , անոնք մեզի պիտի ճանչցնէին Կրօնքին ու Եկեղեցիին վեհութիւնը և Աւետարանին երկնայնութիւնը : Հասնելի զնսցը մը երեք չորս ժամուան , որուն միջոյն յաղթանդամ կուտավարնիս կը մտրակէր ձիերը , գեղջուկի երգ մը հնչեցնելով , որուն ներդաշնակութիւնը կ'ամբողջացնէին ծառատաններուն մէջ Թարջող Թռչունները :

«Վանքին Խաչոն է» , ըսին այդ պարզուկ մտորուն , խաչ հանելու ետանդէն վառուած այդ գեղջուկ շինականին համար , որ շարունակ խաչակնքել կը յանձնարարէր ամէնուս ալ , այն ամէն անգամուն որ աւելի կը մօտենային Վանքին : Ու մենք կը խաչակնքէինք , հպատակելով անոր իւրաքանչիւր նշանին , մինչ խաչագանին ծայրով օդը կը շրջագծէր , նուագակցելով մը դիրքին մէջ լուրջ ու պոտիպոտազու : Շատ ուշ ատեն կը հասնէինք ուխտավայրը : Մ'ծռածիւնը վարագուրած էր շէնքերը , ծառերն ու պարտէզը Մենաստանին , որոնք Թանձր ստուերներուն տակ աներեւոյթ , տեսլական կեանքի մը մէջ կը փոխադրէին մեզ , ուր խորհուրդներու աշխարհի մը պատրանքովը արբշիւ , կը փռնայինք զէպի ի տաճարը , մօտէն վայելելու հոգեթով մեղեղմները , սարսուռագեցիկ , զինովցնող , անէացնող : Հոգ էր որ տեսանք ճշմարիտ նուիրական պատկերը կրօնական խորագեղեցիկ պատկառանքին : Կրօնաւորներու լուսնիոյի դէմքեր և վեղարաւորներու կրկնակի շարքեր՝ Նարեկացիին «Եւ արդ ի վերայն կ'երգէին , ա'յնքան գիտակից շեշտով ու այնքան ցնցող եղանակ մը , երկնասլաց Թռչնքներով Թեւաւորուած , Աստուածութեան մը փառայեղութիւնը խնկաւէտողներ , կոչուած մարդկութեան հոգիներն

ու Եսը կարապետելու զործին : Դպրեկանքէ անդրանիկ սարկաւազները իրենց խցիկներուն մէջ մեկուսացած և զբաղած կրօնային ուսումներու և աւարտական ուսումնասիրութիւններու , վայելել տուին մեզ հաճոյքը՝ բանիբուն և լուրջ վարդապետներու ծանօթացման , որոնց մօտ անցուցինք մեր քննի մը օրուան ուխտաւորի կեանքը , գերազանցապէս յիշատակելի հաճոյքի մը հմայքովը տպաւորուած : Այդ անմոռանալի օրերէն ի վեր , ամէն անգամ որ նոր ուխտեալներ , նոր պատկաւորներ կը մեկնէին վանքէն , նոյն յափշտակութեամբ լեցուած , կը փափաքէինք ծանօթանալ իրենց Երբ անոնք իրենց նախորդներուն պէս կրօնին ու սքեմին գիտակից ձեռնադրեալներ , կը վարդապետէին , կը զրէին Հայ Եկեղեցիին վրայ :

Այսօր սակայն , տանեակ մը տարիներ ետքը , երբ Դպրեկանքի խնդիրը այժմէացած է , տեսակ մը հոգեկան սեղմումով կը մղուիմ երթալ մինչև այն օրերը , որ ատեն ան չունէր բան մը այս օրուան աննախանձելի վիճակէն , և անդադար ձուլուելով այդ շրջաններուն , սրտագին վիշտի մը մէջ , կ'ուզեմ չիմանալ անոր արդի կացութիւնը : Թող ապրի Վանքը , Թող վերընձիւղի Դպրեկանքը , և Թող շքաւորուի , ու շողայ Զարխախանի մենաստանը :

ՌՕՄԱՆ ԽՈՍՐՈՎ

Ռուսահայ ուսումնասէր երէցը Տ. Գիւրգիս Քիւրքի . Աղանեանց , սիրտի հիւանդութեան ենթակայ ըլլալով , բժիշկներու բացարձակ հրամանին վրայ՝ ստիպուել է դադրեցնել **Լուսնայ** անուն կրօնական-բանասիրական ամսագրին հրատարակութիւնը : Այս հաւաքածոն առաջ վեց ամիսը անգամ մը կը հրատարակուէր . վերջերը անոր խմբագիրը յաջողած էր երկամսեայի և . ետքէն ամսաթերթի վերածել զայն . բայց իր առողջութեան քայքայումը իրեն միջոց չձուլուց շարունակելու : Այլ աւելի ցուալի կը նկատուի որ անկարող կ'ըլլայ առաջ տանելու իր «Դիւան Եկեղեցական Պատմութեան» հաւաքածոն , Ս. Էջմիածինի և Ռուսահայ Առաջնորդարաններուն մէջ պ'սիւռած պաշտօնագիրներու հաւաքածոն , որուն հրատարակութեան հատորները արդէն գիտնապատեցան ու վարձատրուեցան Սահակ-Միսաքեան Գրական Յանձնաժողովին կողմէ :

Ս. Բ Ձ Ս. Գ. Ա. Ն. Գ.

Ս. Կ. [Պոլիս]. — Դուք ալ վարակուեր էք յոսի **սէնգալիս** մը այն միբրոսներէն, զոր վերջերս ցանեցին քանի մը ուղեկորոյս պուէաներ: Բառերու շեղջակոյտ մը՝ ձեր **սօնէն** — զիտէ՞ք կանոնները — որուն թոճութիւնն ստակ կը հեծէ խմատը, և զոր սխմելով սխմելով ո՛չ մէկ գաղափար կարելի է հասնել մէջէն: Կարգա՞նք:

Թորք բոյրեր սիրոյ հեծիմն անհառիմ.

Թորք բառ չիկա՞յ Հայերէն լեզուի մէջ. ուրիշ էք հաներ այդ **թորքը**: Եթէ գրչագիրի սխալ է և **թորք** ըսել կ'ուզէք, tant pis! «Սիրոյ հեշտին անտառ»ին մէջ **զուրիս** կամ **սակամունքի** բո՞լրն էք զտեր հոռոտելիքնիդ զգուց:

Կը պարուրեն ցոյի մբնուորսն անդադար.

Յո՞վի ? ! Ժժնոլո՞րուք. ո՞վ են արդեօք այդ մթնոլորտին խենէշ կենցաղաւորները:

Մասալ կեանքն անոնց համար միշտ հիւծիմն.

Որո՞նց համար. Թորքի բոյրերո՞ն. աղա՛ր ճաշակ:

Տարվամքի այս հանգրուանին անխուսափ՝ Ամէն քայլեր կը հանդիպին գոհումալ, նոյնընդոսներ կ'ընդելուզեն **ալի ի յալի**

Ի՞նչ կ'ընեն **ալի ի յալի**. այդ **ալի ի յալի**ը. Ի՞նչ տեսակ բան է. Թուշո՞ւն է, պոռո՞ւղ է. քերականական ո՞ր օրէնքին կը հպատակի այդ կազմութիւնը:

Տարվումներն սիրոյ ջաղքին հոգեթով.

Ջաղք կը նշանակէ անպէտ անձրև. հետեւցուցէ՛ք:

Մեծուսմբու պող քաղծուրիւնն ընդգրկած.

Է՛, ետքէ՞ն . . .

Համբոյրներու միշտ կը ցանկան ապահով.

Ի՞նչ կ'ըսէք. Իրա՞ն. Ի՞նչ սրտանմիկ բաներ կը պատմէք:

Յետո՞յ.

Վայելներու **սարսի** ծուկներ կ'ըսեղծեն, Շուրջս զեղուն ջերմ յոյգերնիմ կը կեղծեն.

Ե՞տքը, Ե՞տքը, ալ բան չիկայ: **Թորք**, **ալի ի յալի**, **ջաղք** **սարսի**, և ոտանաւորը կը լմնայ, մեծաբանն յայտարարութեան մը մէջ:

Շուրջս զեղուն ջերմ յոյգերնիմ կը կեղծեն:

Ի՞նչ եղաւ այս բոլորէն, սիրելի Պուէտ: Ըսել ուզածնի՞դ ինչ է: Խոտովանեցէ՛ք որ բառակուտակումի (phraséologie) հնարքէն — և անճարակ, Թափթփո՛ղ ալ բառակուտակումի մը հնարքէն — զատ ոչ մէկ արժէք ունի այս անճաշակ «ջաղք»ազանգուածը:

Աւելի գաղափա՛ր, բան բառ ջանացէք ղնել գրածնուդ մէջ:

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԸ

Մասիսի 36րդ Թիւով հաստատած ենք զրական պարզեւաւոր մրցում մը, որուն հետեւան են պայմանները. —

Մրցումի նիւթն է պատմութեամբ մը, ուր պէտք չէ գոյուծիւն ունենան կիսն, աղջիկ և տէր: Պատմութեամբը պէտք է է՛ն շատ գրաւէ **Մասիսի** հինգ էջ: Նկատի պիտի առնուին՝ զրուածքին ոճը, նիւթին հրապոյրը, պատմելու կերպը, վերջապէս ընդհանուր զրական յաջողութիւնը: Դրուածքները, մեր նոր լայն պայմանաժամին համեմատ, կ'ընդունուին մինչև հոկտ. 30 (Թ.), որմէ ետքը արդիւնքը պիտի ծանուցանենք սեպտ. 15ին: Մրցումին պարգեւն է հետեւեալ հատորները, զորս ամբողջովին պիտի ստանայ շահողը. — Եւրք գլուխ-գործոց վէպեր ամէնէն համբաւուած հեղինակներէն. ՕԲԻՍԱՎ ՄԻՌՊՈԼ Le Journal d'une Femme de Chambre. Կի ՏԻ ՄՕԲԱՍԱՆի Une Vie. — ՄԻՇԷԼ ՔՕՌՏԻԷի Venus:

Եւ հակա հաւաքածոյ մը պատմութեամբներու հետեւեալ ամէնէն հաշակուած հեղինակներէն. — Ալքիմա Ալէ, Ալեքսանդր Տիւմա Որդի, Բօլ Պետիօ, Աման Շառքանթիէ, Միշէլ Բուտէ, Հանրի տը Բէսքիտու, Վիքթորիէն տիւ Սուէ, Լիւսովիք Հալէվի, Ֆէռնան Վանտիւէմ, Հանրի Լափտան, Մօիս Լըպլան, Բօլ Պուոմէ, Ժիւլ Բլաւոմի, Շառլ Մօնսըլէ, Շառլ Ֆօլէ, Լուի տը Ռօպէտ, Լէօն Վէյնպէտ, Կի տը Թէնամօն, Թիւրիման Պէռնառ, Ժիւլ Լըմէնա, Մատտէլ լ'Էռտէօ, Բօլ Մատկոմի, Մատտէլ Բալէփօ, Ժան Ռէպրաիս, Ժիւլ Արթըր Շնիցկու, Ժան տը լա Վօտէտ:

Հիմնապիւ Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ: Արտօմսէր ՏՕԲԹ. Ե. ՄԱՍԻՍ: Տպագր. ՃԻՀԱՆ:

Հ Ի Ա Ն Տ Թ Ա Շ Ճ Ե Ա Ն

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ - ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ «ԹԱՍԻՍ»

Որ թերթին կողմէ իրաւասութիւն ունի յայտարարութիւններու, ինչպէս առեւտրական գործառնութիւններու համար ներկայանալու փափաքուած հաստատութեանց, և Մասիւնի անունով բանակցելու և համաձայնութիւններ կնքելու :

Միակ առտուան Հայաթերթը, կը հրատարակուի ար-
Մ Ա Ն Ձ Ո Ւ Մ Է չալոյսին, և առտուն խիտ կանուխ՝ կը զանուի Պոլիսի և արուարձաններու ամէն կողմը, բովանդակելով հետաքրքիր, քաղաքական, ներքին, եկեղեցական ու կրթական լուրեր, գրական, անտեսական և ընկերային յօդուածներ : Զորեքշաբթի եւ չաբաթ օրերը կը հրատարակուի առանց ծանուցումի, չորրորդ էջը յատկացնելով առեւտրական և գրական գրուածքներու : Գինն է 10 փարա : Տարեկան բաժանորդագրութիւնն է Պոլիս՝ 80 զրշ., դաւառ՝ 108, արտասահման՝ 25 ֆր. : Վեցամսեայ՝ Պոլիս՝ 50, դաւառ՝ 60, արտասահման՝ 18 ֆր. : Ամէն գրութիւն ուղղել Տէր եւ Տնօրէն Յովհաննէս Ֆ. էֆ. Գայսէրեանի հասցէին՝ 38, Պապը Ալի Ճատտէսի :

ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական. — Բաժանորդագրութիւն կ'. Պոլսոյ համար 80 զրշ., դաւառներու համար՝ 108 զրշ. և օտար երկիրներու համար՝ 35 ֆր. : Զեւքէ վաճառում՝ տալ փարա : Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց : ԱՐԵՒԵԼՔ հրատարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով : ԱՐԵՒԵԼՔ, իր վերականգնուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներով առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւելի՝ հրատարակէ դաւանաւոր նորանոր բարեփոխներու շնորհիւ, զորս ներմուծած է թերթին մէջ : Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԸՆԴՈՒՆԱԿԱՆ հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ : Ոչ նուազ կը զնոհաստելին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, անտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական և այլն, բացի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ Նօթերէ, որոնք նիւթերու ճօն պէսպիսութիւն մը կը կազմեն :

Դպրոցներու մէջ, գծագրութեան ուսուցումի համար՝ առաջնակարգ առաջնորդ մըն է Գծանարգարան անուն տետրակներու շարքը, զոր պատրաստած է Տիար Խ. Ինկիլիդեան : Գծանարգարանը կը գտնուի ամէն գրալիւանի քով, իւրաքանչիւր տետրի գինն է 20 փարա : Կեդրոնատեղի Մանուկի Տպարանը :

Համեղ ճաշելու սիրահարներուն կը յանձնարարուի զլիակ Խօրասանճեանի Խոնի տակ խոհարար Տիար Ղաղարոսի ճաշարանը :

ՏՕՒԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈԴՈՅ,

ԹԻՒ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ շատ, մասնագիտաբար և երկար տարի ներէ ի վեր կը դարձանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին և նոր գաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորադոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Չօրեքարթի օրերը միայն ձրի:



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տագնապի ազդիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

ՀԱՅՐԱՅԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի և ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդատաշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկերի Ընկերութեան վաճառատուններուն մէջ՝

Ս Ի Ն Կ Ե Ր
ՀԱՅՐԱՅԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

- | | | |
|---------|---|---|
| ԿԱԼԱԹԱ. | { | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343. |
| ԲԵՐԱ. | | 2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիւէին դէմ. |
| ՊՈԼԻՍ | { | 1. Սինկերի խան, Թիւրքիւնի կողքին. |
| ՍԱԿԻՏԱՐ | | 2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| | { | 1. Սուլթան Համամ. |
| | | 2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ. 13. |
| | | 2արշը Պօյու, Թ. 120. |

Դասերը և նորոգութիւնները ձրի:

Կատարել երախաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ Փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղզլուի տունը:

ՓԱՆԱԳԱՅԵԱՆ ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏՍԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳԻՇԵՐՈՓԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Կ. Պոլիս, Գասը-Գիւղ, Մէօհիւրսար հասէսի .

7րդ Տարեդասն

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, առնմային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգլերէն և Գե. մաներէն լեզուները՝ հանգերձ խօսեւալարութեամբ (քուրքիք), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ : Գիշերօթիկները կը վայելին կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ : Բանակցութեան համար զիմեւ վարժարան՝ Տեսուչին կամ Տեսչուհիին : Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գշ. Եշ. Շք. օրերը ժամը 5էն 9 զիմեւ «ԳԱՐՈՒՆ» Գրատունը, Մեծ Նոր խան, վերի յարկ, թիւ 55 : Աշակերտուհիներու վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բշ. օր :
- Հիմնադիր-Տնօրէն

Յ. Գ. ՓԱՆԱԳԱՅԵԱՆ

ԱՓՈՍԹՈՒԷ ԻՆՍԹԻԹԻԹ, ԳՈՆԵԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանիս առաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 13/26ին : Հաստատութիւնս կէտ նպատակի ունենալով դռէճական ծրագրով մը բարձր և միանգամայն գործնական կրթութիւն մը տալ ուսանողներուն մասնագէտ դասատուներու միջոցաւ, կ'աւանդէ Օսմ. Հայ. Անգլ. Ֆրանս. և Յունարէն (Յոյն աշակերտներու համար) լեզուները, ինչպէս նաեւ բնական, բնապատմական, ուսողական, փիլիսոփայական, իրաւագիտական և վաճառականական գիտութիւնները : Մեծ խնամք կը տանի աշակերտներու բնորոյցան մաքրութեան և ֆիզիքական առողջութեան : Դպրոցական նոր տարուան համար ուսուցչական մարմինին վրայ աւելցած է նաեւ համալսարանական բժիշկ մը՝ որ պիտի դասախօսէ առողջապահական և բնական գիտութիւններ և ձրիապէս պիտի դարմանէ հիւանդացող աշակերտները, եթէ դատուին : Գիշերօթիկներու տարեթիշակն է 10 Օսմ. ոսկի, որուն կէսը վճարելի կանխիկ և միւս կէսը Ծնունդին : Մանրամասն տեղեկութեան համար զիմեւ Տնօրէն Տօքթ. Ա. Յ. Հայկազեանի, Գանիս :

“ՄԱՍԻՍ,,Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և դաւաւաններու համար տարեկան 60 դրշ.:

Արտատաճմանի » » 14 ֆրանք :

Թղթատարութեան ծախքը մեր վրայ :

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները,

միշտ ձրիարար, թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ :

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կա՛խիկ է :

Զնորոտարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Մ Է Ն

“ՄԱՍԻՍ,,Ի Հասցեով

Պապը Ա.Լի ճասէսի, Թիւ 38

درعليه باب عالی جادهسندہ نومرو ۳۸ «ماسيس» غزتهسى ادارهخانهسى

Rédaction de la Revue «MASSIS»

N. 38, Avenue de la Sublime Porte

CONSTANTINOPLE

Ռ Օ Պ Է Ր Դ Գ Օ Լ Է Ճ Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը կը սկսի Սեպտ. 5/18ին : Կարգադրութիւններ՝ եղած են վաճառականական ուսումը բաղձացուած կատարելութեամբ աւանդելու համար : Վարժարանիս մասնաւոր բժիշկը՝ ուսանողներուն առողջութեան, մարմնամարդներուն և խողերուն, ինչպէս նաև վարժարանիս ընդհանուր առողջական վիճակին վրայ կը հսկէ : Մարմնամարդի նոր և գեղեցիկ շէնք մը կառուցուած է նորոգապէս, իր մէջ ունենալով մարմնամարդի ամէն տեսակ գործիքներ, վերջին դրութեանց համաձայն :

“ՄՍ.ՍԻՍ”ի վեցամսեայ Շրջանի հաւաքածոն, որ 550 էջէ բաղկացած գրական գեղեցիկ հասոր մը կը կազմէ, կրնայ ստացուիլ Խմբագրութենէս, կանխիկ փոխարժեքով՝ 30 դր. . կազմուած 35 : Թղթատարով որկուելիք Հասորներու համար պէ՛տ է 5 դր. աւելի վիսրել :

Դպրոցներու վերաբացումին՝ աղոյ ձեռքը ընկիր, դասագիրքեր տուած ըլլալու վստահութեամբ՝ գործածել՝ Փալադաշեանի հրատարակութիւններէն՝ Ա.—Պզտիկներուն Թուագիտութիւնը : Բ.—Թուագիտութիւն Տարրական Դասընթացի (Ա. և Բ.Տարի) : Դ.—Պզտիկներուն Աշխարհագրութիւնը (քարտէսներով) : Դ.—Աշխարհագրութիւն Տարրական Դասընթացի : Ե.—Պզտիկներուն Երգարանը (հաւաքածոյ մանկապարտէզի երգերու) : Զ.—Այբեկնարան Ընթերցարան ֆրանսերէն լեզուի :